

5.3. 2010թ. փետրվար ամսվա հիդրոտեղեկությունաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոտեղեկությունաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, փետրվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր 5-6 աստիճանով, ՀՀ Սյունիքի և Տավուշի մարզերում՝ 1-3 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում կազմել է +8 +10°C, Արարատյան դաշտավայրի նախալեռներում, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում, Սյունիքի նախալեռներում՝ +6 +8°C, լեռնային շրջաններում՝ +2 +4°C, բարձր լեռնային շրջաններում՝ -3 -7°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է փետրվարի 18-22-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +19 +23°C, Արարատյան դաշտավայրում, ՀՀ Տավուշի մարզում՝ +15 +20°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +12 +17°C, լեռնային շրջաններում՝ +11 +16°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է -3 -7°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ -1 -5°C, ՀՀ Տավուշի մարզում՝ 0 -3°C, Արարատյան դաշտավայրում՝ 0 +2°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է փետրվարի 6 - 10-ին: Լեռնային շրջաններում, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում գրանցվել է -10 -15°C (ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ)՝ -20°C, ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ) և Մասրիկ գյուղում (ՀՀ Արարատի մարզ)՝ -19°C, ք.Ստեփանավանում (ՀՀ Լոռու մարզ) և Սեւյունովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -18°C, ք.Գավառում և ք.Մարտունիում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -16°C), Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ -5 -8°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -3 -7°C:

Փետրվար ամսվա ընթացքում հանրապետության տարածաշրջանների մեծ մասում տեղումների քանակը գերազանցել է նորման, բացառությամբ ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի: Սյունիքի հովիտներում այն կազմել է նորմայի 150-340%-ը, Սյունիքի նախալեռներում՝ 130-160%, ՀՀ Տավուշի մարզում՝ 100-130% (ք.Դիլիջանում՝ 86%), ՀՀ Լոռու մարզում՝ 60-90%, ՀՀ Շիրակի մարզում՝ 25-60% (ք.Արթիկում՝ 120%), Արարատյան դաշտավայրում՝ 110-280%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 120-230%:

Փետրվարի 5-6-ին, 12-13-ին, 16-19-ին, 22-ին և 24-25-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ: Փետրվարի 19-ին ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ), ք.Գյումրիում և ք.Արթիկում (ՀՀ Շիրակի մարզ), ք.Արարատում (ՀՀ Արարատի մարզ) դիտվել է ամպրոպ:

Փետրվարի 4-ին Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ), 5-ին ք.Մարտունիում, 16-ին ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ), 18-ին և 21-ին ք.Մարտունիում, 22-ին ք.Ապարանում և Բագրատաշեն գյուղում (ՀՀ Տավուշի մարզ) դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 15-18 մ/վրկ (Բագրատաշեն գյուղում՝ 33 մ/վրկ), պոռթկումները՝ 25-33 մ/վրկ (Բագրատաշեն գյուղում՝ 43 մ/վրկ):

Փետրվարի 1-ին ք.Գյումրիում, 4-ին Ֆանտան գյուղում, 6-ին ք.Իջևանում, 8-ին ք.Թալինում (ՀՀ Արագածոտնի մարզ), 11-ին ք.Իջևանում, ք.Թալինում, ք.Հրազդանում և ք.Եղվարդում (ՀՀ Կոտայքի մարզ), Ֆանտան գյուղում, 12-ին ք.Հրազդանում, ք.Արթիկում, Ֆանտան գյուղում, 13-ին ք.Աշտարակում (ՀՀ Արագածոտնի մարզ), ք.Հրազդանում, ք.Մարտունիում, ք.Արմավիրում (ՀՀ Արմավիրի մարզ), Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ), ք.Ապարանում, ք.Իջևանում, ք.Գյումրիում, ք.Եղվարդում, ք.Գավառում, Ուրցաձոր գյուղում (ՀՀ Արարատի մարզ), 14-ին Ֆանտան գյուղում, 15-ին ք.Գյումրիում, 16-ին Ամասիա գյուղում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ:

Փետրվարի 28-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունը Արագած բարձր լեռնային կայանում կազմել է 250 սմ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 66 սմ, Ամասիա գյուղում՝ 43 սմ, ք.Հրազդանում և Սեմյոնովկա գյուղում՝ 30-33 սմ, Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 24 սմ, ք.Ապարանում՝ 2 սմ, ք.Մարտունիում, ք.Գավառում և ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 1 սմ: Մնացած շրջաններում ձյան ծածկույթը բացակայել է:

Փետրվարին հանրապետության հյուսիս-արևելյան շրջանների գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 210-250%-ը, իսկ մնացած շրջանների գետերում՝ 120-130%:

Սևանա լճի մակարդակը փետրվար ամսվա ընթացքում բարձրացել է 3 սմ-ով և 2010թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել 1899.32 մ, որը 2009թ. նույն օրվա համեմատ բարձր է 43 սմ-ով: